



5. ՀԱՃԻ ՍԱՅԱԹ

Հաճի Սայաթ, մեկ տղա, մեկ աղջիկ ու ուր կմիկ:

Մեկ օր Սայաթ կելնի, կերթա պազար, կը տեսնի մեկ պստիկ տղա կոթալուկ էր էնտեղ. կը վերցնե, կո տուն կը բերե. կըսա. - Կո, կմիկ, մեկ տղա իմ գտեր, բերեր իմ. մեզի մեկ տղա կեր, եղավ երկու:

Էտ տղի անուն դրեցին Թափտուխ:

Տիրեցին էդ տղան, էղավ տաս տարեկան. մեկ օր ասաց Սայաթ. - Կմիկ, էս տղան ու աղջիկ մնան տուն, ես, դուն ու մեր հալալ տղեն երթանք հաճ:

Աղջիկ ասաց. - Ընչի՞ զիս ու Թափտուխն էլ չեք տանի խըտ ձեզի:

Խերն վերուց, ասաց. - Լաո՛, մենք երթանք. էն մեկել դրուն ձեզի կու տանինք, մկա էս տան ըմեն բանին մուղաթ էղեք, չուր մենք գանք:

Էն տեղ էղոնք երթալ էղին. մենք դառնանք աղջկե ու Թափտուխի վերեն. էնպես զիրար կու պախին, կը շախին, էփ ու թուխ կենին, կուտեն:

Մեկ օր էլ Թափտուխ էլավ, գնաց շուկեն. ինչ որ պիտեր ուրանց, ժողվեց, առավ, էկավ, ճամբխու մեջ տեղ կայնավ, տեսավ որ մե պառավ, ասաց. - Դու Հաճի Սայաթի աղջկա խեստ ի՞մալ եք, գիրկ ու ծոց կենեք:

- Խափանի՛ պառավ, չէ՞ էնի՛ իմ քյուրն ա:

- Էնի քյու քյուրը չէ, քեզի գտած ա, պետք է զենոր առիս:

Թափտուխ ասաց. - Փո՛ւ, նալլաթ սատանին էղի, էս պառավ սատանա՞ յա, ի՞նչ ա:

Թող էտուր, էկավ տուն: Էն մեկել լուսուն ա, պառավ էլման էկավ առեջ, էլման զեն խոսք ասաց, էլման տղեն ականջ չէրաց: Էկավ տուն, աղջկեն բան չասաց:

Էլավ էն խլուսուն գնաց, պառավ էլման էլավ առեջ, զեն խոսք ասաց: Տղեն մե խետ հետ դարձավ, էկավ:

Աղջիկ ասաց. - Աղբեր, հորի՞ն շոտ դարձար, էկար էսօր:

Ասաց. - Դե՛, խափանի՛ր, ոյ՞ու ինչի ծի աղբեր կասես, ոյ՞ու իմ քյուր չես, ոյ՞ու դո՛ր, ես դո՛ր, ախր ծի գտած ա, հորի՞ն իմ անուն Թափտուխ դրած ա, ես քե պտի առնեմ:

Աղջիկ ի՞նչ արաց-չարաց, չկարցավ պրծեր էր, ասաց. - Դյու ու քյի Աստված. համբերե. էրթամ լվացվիմ, իգյամ:

Աղջիկ էլավ ոյ՞ուս որ էլներ տանիս, տղեն ծեռ թալեց, զփեշ, բռնեց:

- Դո՞ր կէրթաս, աղջի, - ասաց:

Աղջիկն ա. Թափտուխի գլխի գագտան վրա էգարկ իպրուխը. գլուխ կոտրավ, արուն թափավ:

Որ արուն տեսավ, ցավաց աղջիկ:

- Վա՛խ իմ աղբեր, վա՛խ իմ աղբեր, - ասաց, - վրեն խեղճցավ, գլուխ կապեց:

Տարին թմավ, էդ օր օրն է, որ Հաճի Սայաթ պտի իգյա: Թապտուխ գլուխ կոտրուկ գնաց առեջ. Հաճի Սայաթ ընկավ Թապտուխի վիզնիվեր, ասաց. - Էդ ի՞նչ հալ ա, ի՞նչ ա էղեր:

Ասաց. - Նե՛ ոյ՞ու էղիք, նե՛ ծեր աղջիկ, գացեր եք չուր մկա իմ հալ էս ա էղեր, ըմեն օր մարդ կը բերա ուր մոտ. էսօր լե գարկեցին, իմ գլուխ էրին պրինտար, թորկին, գյանցին:

Հաճի Սայաթ ասաց ուր տղին. - Գնա՛, էն աղջիկ վերո՛ւ, տա՛ր բուրակ, սպանե՛, արի՛, որ գյամ ի տուն, չտսնամ:

Տղեն գնաց տուն, աղջիկն օր տեսավ ուր աղբեր, ասաց. - Աղբեր, ո՞ւր ա իմ խեր, իմ մեր:

Ասաց. - Էդին դիեն գյուգյան, էլի՛ էրթանք առեջ:

Աղջիկն կը խափա. առավ գաղջիկ, գնաց բուրակին մեջ:

Աղջիկ ծիուց իջուց, թուր քաշեց, էգարկ, էցգեց, գետին, ասաց. - Չուր էրթամ տուն, կը մեռնի:

Դարձավ, էկավ, խասավ տուն, խերն ասաց. - Ի՞նչ էրեցիր:

- Սպանեցի, թալեցի բուրակի մեջ, էկա:

- Աղեկ էրեցիր էն անգգամին:

Ենոնք թըղ տուն մնան, աղջիկն էլ քիչ մը սաղցավ, մնաց բուրակի մեջ:

Դառնանք Իրանա դեիս. Իրանա դիեն Խոյա Ալիխան, ուր վազիրն էլ խետ՝ ման կուգային, ընկած էին բրակներու մեջ ավ ու ղուշ կենեին:

Վազիրը վերու էժը լարեց, էտենն գնաց, մնաց Ալիխան դատի կայնուկ, ուրին-ուրին ասաց. - Իդա տեղ պտոտիմ, չուր վազիր իգյա:

Պտոտեցավ, տեսավ են խորոտ աղջկեն:

Վազիր էկավ, Ալիխան ասաց. - Դյու նեջիր բերեցիր, իմ նեջիր էսա տեղ գտա:

Ալիխան զաղջիկ վերուց, առավ էկավ, բրին սաղցուց. ինչ օլտուղվն իմցավ: Տիրեց եղ աղջկեն, էրաց ուր կնիկ:

Մեկ տարի աղջիկ ճժով մնաց. վաղտն էկավ, պարկավ, երկու տղա էբեր:

Տաս տարի տիրեցին եղ տղեկներուն, քոջցան. մեկ օր կնիկ ուր իրկան ասաց. - Տաս տարի ծիկ բերեր ես, ես էլ խեր ունիմ, մեր ունիմ, աղբեր ունիմ. ինչ կեղնի ծիկ տանիս, տեսնիմ:

Ալիխան ասաց. - Ես չիմ իգա խըտ քեզի, քաղաք կը մնա անտեր. մարդ կը դնիմ խըտ քեզի, գնա՛:

Վազիրը ուր խոշունով դրեց կնկա խետ. ճամբեց, չուրի հիրկուն գյճցին, իջան պրակի մեջ:

Վազիր ուր ասկրին իգին էտուր, ասաց. - Տարեք, ծիանք կուշտ ուտեն, արածան:

Վազիրը էկավ խանումի կուշտ. նստավ ձեռ թալեց վզով:

Խանում ասաց. - Էդ ի՞նչ բան ա, ոյիւ կենես, չէ՞ քյիւ աղեն դրեր ա խըտ ծի, որ հավատարիմ էղիս. էսպես բան չէղի որ ոյիւ կենիս:

Ասաց. - Պտի էղի, կեղի, թե չէ, կէլլիմ քյիւ մեկ տղեն կը սպանեն:

- Էրկու տղեն էլա սպանիս, չէղեր ա ու չէղիր:

Վազիր էլավ են մեկ տղին սպանեց. մնաց մեկը: Ասաց. - Ձի ձեռ կու տաս, տո՛ւ, չէ՞, մեկեւ տղեն լե կը սպանեն:

Ձեռ չէտուր, վազիր են մեկ տղեն էլ սպանեց, էկավ էլման:

- Կնիկ, - ասաց, - ձեռ պտի տա՞ս:

- Դյիւ քյի Ասոված, - ասաց կնիկ, - տո՛ւր իմ չարշավ, էրթամ վըր իմ տղոց լամ, իգյան քյի կուշտ:

Վազիրը պարան կապեց ոտը, ծերը բռնեց: Աղջիկ գնաց, փետ տնկեց. պարան կապեց փետին, մտավ ի բրակ, կուրիսավ:

Վագիր տեսավ նե խանում կա, նե բան, հավար կեծգա, չոքերուն կը գարկա, քանի տեղով բրինդար կենե, կասա. - Գողեր էկան, ծի գարկին, յարալու էրեցին. էրկու տղին էլ սպանեցին. խանումն էլ տարան:

Ղոշունին էլ կասա. - Դորի՞ն անգցաք, չէկաք:

Վագիրը ուր ղոշունով կդառնա Ալիխանի մոտ, կասա. - Ես մենակ եմ մացե, գողերը բռնեցին վրեսի. տղեկներ սպանեցին. ծի բրինդար էրին, խանումին էլ տարան:

Ալիխան առեց ուր վագիրը, էլավ դավոնշ ղուլղընտա, ընկավ աշխրներ, պտտեցին:

Աղջիկը էկավ ուր խոր խովվու մոտ, խովիվ վերուց, ասաց. - Դիւ ծիկ չե՞ս առներ:

Կասա. - Խովիվ աղբեր, հիսնե ծեռ վերուցես, իմ դարտ շատ ի, քզնե հյվի կենեմ:

- Որ էդմալ ասիր, դու իմ քյուրն ես:

- Քզնե հյվի կենեմ, ծեռք մի շոր պտի տաս, որ խագնիմ:

Կը խանա ուր շորեր կուտա աղջկեն. աղջկե շորեր կառնե:

Աղջիկ ուր շորեր փոխեց. էկավ խոր քաղաք՝ Բաղեշ, գնաց աղբրի վրեն, թուղթ կպուց. նստավ, խաց կերավ, իշկեց օր Թափտուխ էկավ օր ծիանք ջրա, աղջկե ասաց. - Քաչա՛լ, էս մեկ ծին բռնա, էն մեկ ծին ջրեն:

Քաչալ բռնեց, ջրեցին ծիանք. Թափտուխ ասաց. - Մշա՛լ չես է՞ղի, քեզի բռնիմ:

- Կեղնիմ, հորի՞ չեղնիմ, իմ զանահաթ ի՞նչ ա:

- Էրթանք մեր տուն, իմ խեր պարոնշի քյի հախ:

Էլան գնացին տուն, Դաճի Սայաթ ասաց. - Քյի հախ ի՞նչ ա, ի՞նչ կյաննաս էնիս:

- Չի կը պախիմ, դագարած կեղիմ. խզմաթ կենիմ. ինչ ասես կենիմ:

Աղջիկ մեկ ամիս մնաց. էդ տեղ, շատ լավ խավանան էդոր:

Օրմ լե քաչլուն ճամբեցին շուկեն բան բերելու: Քաչիկ գնաց շուկեն, տեսավ, ի՞նչ տեսնի, Ալիխան, ուր վագիր:

Ալիխան էկավ աղբրի վրեն, լվացվավ, թուղթ կարդաց, գրուկ էր.

«Ա՛յ պագրկյաներ, դուք որ կը գաք,

Ա՛յ խոճաներ դուք որ կերթաք.

Այս գիրը Ալիխանին հասուցե՛ք,

Եթե ստեղծող Աստված կը սիրե՛ք.

Այս գիրն Ալիխանին հասուցե՛ք.

Հառաչանքներս նորա հայտնեցե՛ք»:

Քաջլի աչք կընկնի դարվիշներուն, դարվիշներ նստան. մարաքա ղուրմիշ երած են*. ամեն թամաշա կենին. քաջալն էլ ա, ապսպրած բանը մոռացալ, նստալ դարվիշներու թամաշա:

Թափտուխ գնաց քաջլու ետև, էկալ տեսալ նստած ա, երկու չափա-լեխ էգարկ, ասաց. - Շան որդի, ի՞նչ նստած* թամաշա կենիս, մենք քզի բանի ենք ճամբեր:

Գնացին տուն. Չաճի Սայաթ խարցուց. - Չորի՞ն անգըցար, տղա՛:

- Դարվիշներ խաղ կասեին, Թափտուխ էկալ, ձիկ զարկեց:

Փշում կռվալ խետ Թափտուխի Չաճի Սայաթ:

Քաջալ Չաճի Սայաթին հիվի էրաց:

- Աղա, - ասաց, - քզեն հիվի կենեմ, իզին տաս, օր էն երկու դարվիշ բերեմ տուն, մեզի ղոնախ:

- Չայտե, իզին ա քեզի, ի՞նչ կենիս, էրե՛:

- Ինչ որ կենեմ, էսօր պտի չխոսաք իմ վրեն:

Քաջալ գնաց, դարվիշներ ղոնախ բերեց:

Ալիխան ասաց. - Քաջա՛լ, դյու ինչ ես, քյի տուն ի՞նչ եղի:

- Աստված ինչ որ խսմաթ էրեր ա, կուտիք:

Ելան, գլացին, նստան, կերան, խմեցին, էլան պտի էրթեն:

- Չեզի իզին չկա, - ասաց քաջալ, - էսօր գիշեր պտի մնաք դաս. պտի խոսինք էստեղ, լուսուն Աստված ձեր բան հաջողա:

Թափտուխ ասաց. - Ինչի՞ կեղիս պատճառ:

Որ ասաց. երկու սիլլա էտուր Թափտուխին.

- էսօր քաջլուն իզին ա, - ասաց Չաճի Սայաթ, - ինչ կենե, կենե:

Քաջալ գնաց դռներ փակեց. բանլիսներ էրեր, ուր ճեպ էղիր ասաց.

- էսօր իզին իմն ա, ինչ որ կենիմ, կենիմ, դարվիշ բաբաներ, ինչ օր ձեր գլխուն էկեր ա, ասեք, - ասաց քաջալ:

Չմեռ էրկեն գիշեր էր, ամեկը ուր գլխու էկած ասաց:

Քաջալ ասաց. - Նօբաթ իմն ա, քանի խոսք էլ ես պտի ասեմ:

Ասին, - Ասա՛:

Ասեց. - Մե ժամանակով Բաղշու քաղաք Չաճի Սայաթ էղեր ա, էնուր էլ մեկ կնիկ, մեկ տղա, մեկ աղջիկ էղեր ա, գացեր ա մեյտան, մեկ տղա էլ ա գտեր, բերեր ա, անուն դրեր ա Թափտուխ: (Թափտուխ էլա ուր մտքին մեջ կը մեզա, Թափտուխ որ կա, ես իմ): Չաճի Սայաթ էլալ, տաս, տասն-խինգ տարի տիրեց էղ տղին. մեկ օր էլ էլալ, գնաց հաճ, Թափտուխն ու

* Սագ ածելով երգ ասել (ծ.ա.):

եղ աղջիկ թորկեց տուն: (Հաճի Սայաթ էլա կը մեզե, ես իմ Հաճի Սայաթը):
Թափտուիս ուր չար մտքով գոռ տտուր աղջկեն, աղջիկ ինչ իլաճ էրաց,
չկյանրցալ պրծներ. իբրուղը զարկեց գլխուն, եղալ բրինդար:

Քաչալ ասաց. - Աղեկ ականջ արեք:

Էլման ասաց. - Աղջիկ Թափտուիսի վերեն ցավաց. իջալ, բրինը
կապեց, ասաց. «Աղբեր, իմ խոզին էլլեր քե խամար, էլի իմ աղբերն ես,
բան չկա»*:

Տարին թմալ, Հաճի Սայաթ էկալ, Թափտուիս գնաց Հաճի Սայաթի
առեջ. ասաց՝ էսպես, էսպես: Հաճի Սայաթ կօղորկե ուր տղեն, կառնի
կտանի գաղջիկ ի բուրակ, կը սպանա. աղջիկ չմեռնիր: Իրանա տեխեն
Ալիխան ու վազիր նեջիր կիզան եղ սար. աղջկան վերուցին, տարան:
Ալիխան արալ ուր կնիկ. տարիմ մացին. երկու տղա էղալ, աղջիկ մեկ օր
իզին ուզեց որ էրթա ուր խոր. վազիրը խոշունով էղիր խետ որ գնա.
գացին չուր հիրկուն մեջ բուրակին մացին: Վազիր իզին էտուր
ծիավորներուն. ծիանք առան, գացին: Վազիրի միտք փոխվեր էր ախր,
ծեռ թալեց աղջիկեն, աղջիկ ծեռ չէտուր**:

- Քաչալ, տուր բանլիս, էրթամ իզյամ, - ասաց վազիր:

- Մնաց երկու խապար, կասեն, կո կէրթաս:

Էլմ ասաց. - Վազիր տղեկներ սպանեց, աղջիկ մի հնար գտալ, փա-
խալ: Վազիր բրակի մեջ հավար կը կանչա՝ տղեկներ սպանեցին. կնիկ լե
տարան:

Քաչալ ուր քաչլու շորեր խանեց:

- Իշկեք, - ասաց, - մկա ես էն աղջիկն իմ. էս էլ իմ խերն ի՝ Հաճի
Սայաթ, էս էլ իմ մարդն ի՝ Ալիխան. էս էլ քյո Թափտուիս, էս էլ քյո վազիր:

Չաճախ, չոմլեխ, կյավչի, քյանսա. գոտք Թափտուիսի, վազիրի գլուխ
կոտռալ, Աստված լուս էրաց:



* Թափտուիսի ոռ վզվզուն առալ, բանլիս կուզե, որ դուս էրթա, փախնի (ծ.ա.):

** Վազիրի ետք օթուզ-տոխուզ թալեց (ծ.ա.):